Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ

ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր գյուղի 275-րդ թաղամաս 1-5 հողամաս հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

<< Դաբլ վի Քոնսթրաքթ >> ՍՊԸ

<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ՝

Տնօրեն Ա.Մինասյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3
1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն 3
1.2 Հապավումներ 3
1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը 4
1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը) 7
1.4.1 *Նախատեսվող գործունեության նկարագիր* 7
էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ 9
1.4.2 *Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը* 10
1.4.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում 18
1.4.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ 18
1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ 19
1.4.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա 22
1.4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում 24
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ 26
2.1 ԿԼԻՄԱ 26
2.2 ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ 29
2.3 ՀՈՂԵՐ 30
2.4 ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 30
2.5 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ 31
2.6 ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ 31
2.7 ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ 33
2.8 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 35
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 36
3.1 Ռիսկերի գնահատում 36
3.2 Արտանետումների աղբյուրները 37
3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն 37
3.3.1 Մթնոլորտային օդ 37
3.3.2 Ջրային ռեսուրսներ 37
3.3.3 Հողային ռեսուրսներ 38
3.3.4 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ 39
3.3.5 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը 40
3.3.6 Աղմուկ 41
4. Մշտադիտարկումների իրականացման պլան 42
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 44
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ 45
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 44
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 45

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝	<< Դաբլ վի Քոնսթրաքթ >> ՍՊԸ
1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	Նոր գյուղի 275-րդ թաղամաս 1-5 հողամաս
1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Նոր գյուղի 275-րդ թաղամաս 1-5 հողամաս
1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	Կոտայքի մարզ Ակունք համայնք

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Բազմաբնակարան բնակելի շենքերը նախատեսվում է կառուցել Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր գյուղի 275-րդ թաղամաս 1-5 հողամաս հասցեում:

Աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բնակելի համալիրի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման նախնական գնահատման հայտը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. << Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,
13. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեվերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներ-մուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

16. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),

17. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

18. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

19. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

20. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

21. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967- Ն որոշում,

22. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

23. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հատատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 *Նախատեսվող գործունեության նկարագիր*

ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր Գյուղի 275 թաղամաս 1-5 հողամաս հասցեում բազմաբնակարան բնակելի շինության էսքիզային նախագծի մշակման աշխատանքներին հիմք են հանդիսացել կառուցապատող «Դաբլ Վի Քոնսթրակթ» ՍՊԸ հետ կնքված պայմանագիրը և տեխնիկական առաջադրանքը:

Ելակետային տվյալներ

Անշարժ գույքի վկայական տրվ. 2.12.2022թ N 02122022-07-0179

Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված կադաստրայի քարտեզի հատվածը:

Տեղանքի գեոդեզիական հանույթը:

Տարածքի ինժեներաերկրաբանական պայմանների վերաբերյալ եզրակացություն:

Հողամասը տեղակայված է Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր գյուղ բնակավայրի վարչական տարածքում, Աբովյան քաղաքի հարևանությամբ: Հողամասի ընդհանուր մակերեսը 5 հա է:

Նախատեսվում է հողամասը կառուցապատել բազմաբնակարան բնակելի շենքերով՝ համաձայն ներկայացված գլխավոր հատակագծի: Առաջին հերթի համար նախատեսված երկու շենք:

Շենքը նախատեսված է 16 վերգետնյա և 2 ստորգետնյա հարկերով: Առաջին հարկը նախատեսվում է հասարակական սպասարկման սենքեր համար: Մնացած վերգետնյա հարկերը նախատեսվում է հարմարավետության երկրորդ կարգի 7 երկսենյականոց բնակարաններ՝ հարկում բնակարանների 397,16 քմ ընդհանուր մակերեսով: Մեկ շենքում նախատեսվում է 105 բնակարան:

Հարկի ընդհանուր մակերեսը կազմում է 557,93 քմ: Ստորգետնյա հարկերը նախատեսված ավտոկայանատեղերի համար:

Ծավալատարածական լուծումներ

Նախագծի ծավալատարածական լուծումները պայմանավորված են ընկերության կողմից իրականացվող կառուցուպատման քաղաքականությունից: Նախատեսվում է նաև բարեկարգել տարածքը՝ իրականացնել ներթաղամասային և մոտեցնող ճանապահներ, ապահովել բացօդյա ավտոկայանատեղիներ, կանաչապատել, կազմակերպել մանկական խաղահրապարակի, հանգստի և ժամանցի գոտիներ:

Ճարտարապետաշինարարական մաս

Շինությանը ֆունկցոնալ առումով բազմաֆունկցիոնալ շինություն է, որի առաջին հարկը հասարակական սպասարկման սենքեր են, մնացած հարկերը՝ բնակելի :

Սենյակների և սենքերի կազմը նախատեսված է տեխնիկական առաջադրանքին համապատասխան:

Շինությունը նախատեսվում է շրջանակակապային կրող կարակասով, ե/բ միջհարակային ծածկով:

Պատերը՝ թեթևաբետոնե բլոկերով, երեսպատումը՝ ֆելզիտե, տուֆի և բազալտե սալիկներով՝ օդափոխվող հիմնակմաղքի վրա:

Տանիքը հարթ, ներքին ջրահեռացմամբ:

Ներքին հարդարումը, հատակները, սենյակների գույնը նախատեսված է իրականցնել նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

Արտաքին դռները նախատեսված են ալյունիմե, ապակեպատ ապակեփաթեթներով, ջերմամեկուսացված, սենյակներում՝ ՄԴՖ-ից, սանհանգույցներում՝ մետաղապլաստե՝ փայտի ֆատկուրայով, շքամուտքի հատվածներում փայտյա, աստիճանավանդակների հատվածում՝ ալյումինե, ապակեպատ, հրակայուն:

Պատուհանները նախատեսված են մետաղապլաստե, ջերմամեկուսացված պրոֆիներով, երկշերտ ապակե փաթեթներով, վիտրաժները՝ ալյումինե, ջերմամեկուսացված, երկշերտ ապակեփաթեթներով:

Նախագիծը մշակված երկրորդ սեյսմիկ գոտու համար:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԵՆ՝

Կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը – 50000 քմ;

Կանաչապատում՝- 16300 քմ;

Կառուցապատման մակերես – 9200 քմ;

Անջրանցիկ մակերես – 24500քմ;

Բնակարանների ընդհանուր թիվը - 210 բնակարան

Ավտոկայանատեղի - 36 ավտոկայանատեղի

Բացօդյա ավտոկայանատեղ 60 հատ

- Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝բնակավայրերի,
- գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Էներգախնայողության և Էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ

Շենքերի էներգաարդյունավետության մակարդակը ապահովելու համար՝ նախատեսված է օդափոխվող ֆասադային համակարգ /вент-фасад/, որը ներառում է ջերմամեկուսիչ շերտի առկայությունը, երեսպատվող քարերի համար լրացուցիչ կոնստրուկտիվ համակարգ, անկեռներով ամրացված արտաքին պատի մակերևույթին: Արտաքին պատի արտաքին կողմից ամրացվող ջերմամեկուսիչ շերտը՝ 100մմ հաստությամբ հանքային բամբակի սալիկները ապահովում են արտաքին պատերի ջերմային դիմադրության նորմատիվային պահանջները /հանգույցները կցվում են / :

Շենքերի տանիքները նախատեսված է հարթ, չշահագործվող: Տանիքի համար նախատեսված շերտերը նույնպես հաշվարկված են բարձր ջերմային դիմադրության համար, որը բարձրացնում է շենքերի էներգաարդյունավետությունը:

1.4.2 *Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը*

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման նյութերի տվյալների՝ ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական ժամանակաշրջանի հրաբխային առաջացումները՝ բազալտները,հրաբխային խարամները, որոնք ծածկվում են ժամանակակից դելյուվիալ - պրոլյուվիալ առաջացումներով:

Տեղամասի երկրաբանական կտրվածքը ներկայացված է հետևյալ ինժեներաերկրաբանական էլեմենտներով՝ (վերևից-ներքև).

Շերտ - 1 Հողաբուսական շերտ, լիցքեր, չպառկապնդված, կավային, կազմով: Շերտի հորատված հզորությունը մինչև 1,20 մետր է: Շերտը համատարած է:

Շերտ - 2 Ավազակավեր, կավավազներ, շականակագույն, բաց շականակագույն, սակավ-խոնավ, կոշտ, կիսակոշտ կոնսիստենցիա: Շերտն ունի համատարած տարածում: Շերտի բացված հզորությունը հասնում է 0,4-5,0 մետր: Հիմնականում ունի համատարած տարածում, այն բացակայում է հորատանցք 10-ում: Ժամանակակից դելյուվիալ–պրոլյուվիալ առաջացումներ են:

Շերտ - 3 Խճա-մանրախճային գրունտներ, տեղ-տեղ մեծաքարեր, ավազակավային կավավազային լցոնով Շերտն չունի համատարած տարածում: Շերտի բացված հզորությունը հասնում է 1,0-5,0 մետր: Ժամանակակից դելյուվիալ առաջացումներ են:

Շերտ - 4 Հրաբխային խարամ, մոխրագույն, խճա-մանրախճային կազմի Շերտը համատարած չէ: Շերտի բացված հզորությունը հասնում է 0,5-4,0 մետր: Չորրորդական ժամանակաշրջանի, հրաբխային առաջացումներ:

Շերտ - 5 Բազալտներ՝ մոխրագույն, թույլ ծակոտկեն, բեկորային անջատումներով: Շերտը համատարած բացված չէ: Շերտի բացված հզորությունը հասնում է 2,0 մետր: Չորրորդական ժամանակաշրջանի, հրաբխային առաջացումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Հորատման և լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքում առանձնացվում են 4 ինժեներաերկրաբանական էլեմենտներ: Ինժեներաերկրաբանական էլեմենտների գեոտեխնիկական հատկությունների հաշվարկային ցուցանիշները բերված են աղյուսակ-ում:

Աղյուսակ10

Ֆիզիկա-մեխանիկական բնութագրերը		Գրունտի շերտերը			
		2	3	4	5
1. Գրունտի խտությունը, տ / մ³		1,76	2,175	1,60	2,67
2. Ծակոտկենության գործակիցը, e		0,750	0,239	0.714	0,040
3. Ներքին շփման անկյունը, աստիճան	tg φII	0,273	0,665	0,630	-
	tg φI	0,255			-
4. Տեսակարար շաղկապվածությունը, կՊա	CII	0,024	0,001	-	-
	CI	0,022			-
5. Դեֆորմացիայի մոդուլը E, ՄՊա		9,6	35,0	30,0	10000
6. Ամրության սահմանն ըստ միառանցք սեղմման, Rs, ՄՊա		-	-	-	90,2
7. Պայմանական հաշվարկային ճնշումը, R, ՄՊա		0,200	0,35	0,3	-
8.Ներքնակի գործակիցը		0,8	2,0	2,0	40,0
9. Կարգն ըստ սեյսմիկ հատկությունների		III	II	II	I

2. Ստորգետնյա ջրերը կապված են բազալտային լավայի ճեղքերի հետ, տեղադրված են խորը հորիզոններում:

3. Նախագծվող շենքի հիմնատակի կայունության վրա բացասաբար ազդող ֆիզիկա-երկրաբանական երևույթները բացակայում են:

4. ՀՀՇՆ 2020 համաձայն ուսումնասիրվող տարածքը գտնվում է սեյսմիկ 2-րդ գոտում: Նշված պայմաններում գրունտային պայմաններն ըստ սեյսմիկ

հատկությունների գնահատվում են որպես 3-րդ կարգի, որին համապատասխանող գրունտի հորիզոնական առավելագույն արագացման հաշվարկային արժեքը կկազմի

$$a_{max}=0,4x1,1=0,44g\ (K_0=1,1);$$

Ինժեներ-երկրաբան, երկրաբան-
դոկտոր, պրոֆեսոր Լ. Հայրոյան

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:1000



Изм.	Кол.уч.	Лист	№Док.	Подп.	Дата
ՆԳՏ		Ալ.Բուլդ.Գրան			
Նախագծող		Ալ.Բուլդ.Գրան			

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ 275-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 1-5 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԹՆԱԿԵԼԻ ՇԵՆՔ

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ «ԴԱԼԻ, ՎԻ ԲՈՒՍԻՆԵՍ» ՍՊԸ

ՇԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ	ՓՈՒԼ	Թերթ	Թերթեր
	ԱԼ	ԳՏ 1	17
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ	«ՀԱԼՊԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ 2023 թ.		

1-ին փուլով նախատեսվող 2 շենքերի հատակագիծ




ՀԱՏՎԱԾ ՆՈՐ ԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻՑ 1:10000
ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ 1:5000
Հ
ՆՈՐ ԳՅՈՒՂ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՎՈՂ ՀՈՂԱՄԱՍ 5 ՀԱ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՆԼԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ 275-ՄԻ ԹԱՂԱՄԱՍԻ 1-5 ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵՎՈՒ ԲԱԺԱՆՄԱՆԱՅԻՆ ԲԱՆԱԿԻՐՏԵՐ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՎՈՂ «ՀԱԼԴԻ ՔՈՒՆԱԼՅԱ» ՍՊԸ
ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ
ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ՓՈՒԼ
Թերթ
Թերթեր
ԷԼ
ԵՑ
5
«ՀԱԼԴԻ ՔՈՒՆԱԼՅԱ» ՍՊԸ
2023 թ.

Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 38 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ



ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄ -- 2 ԱՄԻՍ

ԸՆՀԱՆՈՒՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ -- 36 ԱՄԻՍ

ՆԳԾ	Խ.Բուդումյան		ԿՈՏԱՅՔԻ ԱԼՄԱՅԻՆ ԳԱԼԱՅԱՅԻ ՆՈՐ ԳԱՅՈՒՂԻ 275-ՄՎ ԳԱՂԱՓԱՐ 1-ԻՑ ՀՈՂԱՅԻՆ ԳԱԼԱՅԻՆԻՑ ՆՈՐ ԸՆԴԱՑԻՔԻ ԳԱՂԱՓԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
Նախագծեց				
Ստուգեց			Շինարարության կազմակերպման պլան	Փուլ / ԹԿՔ / ԹԿՔԹԼ
				ՀՆ
			Գինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց	«ՀԱԼՄԻՆ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ 2023

1.4.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

1.4.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շենքերի, ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և

մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռանարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:


ՇԻՆ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
1. Շին. հրապարակի պատրաստում
2. ժամանակավոր շին. աշխատանքների կարգավորման ճան. նշանների տեղադրում
3. ժամանակավոր շինությունների տեղադրում
4. Շինության փորվածքի իրականացում
5. Հիմքերի կառուցում, տեղադրում
6. Շինանյութային աշխատանքների իրականացում
7. Հարդարման աշխատանքների իրականացում
8. Ինժեներատեխնիկական աշխատանքների իրականացում
9. Բարեկարգման աշխատանքների իրականացում
10. Լուսավորության համակարգի կառուցում
11. ժամանակավոր շինությունների հեռացում շին. հրապարակից
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԵՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1. Շին. հրապարակում ժամանակավոր գրասենյակ, որտեղ առկա է նաև առաջնային բուժ. օգնության պարագաներ
2. Շին. նյութերի պահեստ
3. Պահակետ, որտեղ առկա է հակահրդեհային պարագաներ
4. Գործիքների ժամանակավոր պահեստ
5. Ավտոլվացման կետ
6. Բանվորների տնակ-հանդերձարան
7. Զուգարան, լվացարան
8. Հեղուկ-նյութերի պահեստ
Бетононасос БС-126
Бетоносмеситель V=6.0 м3
Бульдозер Д3-25
Экскаватор ЕК-18
Ավտոինքնաթափ
Էքսկավատոր
Աշխատանքի ուղղությունը
Շինության վտանգավոր գոտի
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇՈՒՆՆԵՐ
Կառուցվող կառույց
ԼՈՍԱՏԵՍ

1.4.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 130 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ - 10 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Աշտարակային կցովի վերամբարձ կռունկ	**QTZ 280**	2
2	Ավտոմոբիլային կտունկ	LIEBHERR LTM 1100-4.2	1
3	Ավտոկռունկ	KC 65713-5	1
4	Էքսկավատոր՝	CAT 320	3
5	Գլդոն	CAT CS 563	2
6	Բուլդոզեր	CAT D6R	1
7	Շարժական կոմպրեսոր	Comp air C 76	1
8	Ավտոբետոնապոմպ	Merc B. Acrtos 4144 D	2
9	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИВ-91А	2
10	Թրթռիչ խորքային էլեկտրական	ИВ-102А	4
11	Փոխարկիչ թրթռիչների համար	ИВ-4	2
12	Տոփանիչներ պնևմո և ձեռքի		8
13	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	6
14	Ավտոինքնաթափ		ըստ հաշվարկի
15	Ավտոբետոնախառնիչ	Kamaz 58149 z	ըստ հաշվարկի

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

1.4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է օրեկան մեկ մարդու հաշվարկով 0.2 կգx130x1140/1000= 29.64 տ և շինարարական աղբն է 650 խմ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

a) **Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$W_{խ.տ.}$ = **(n x N + n_1 x N_1) x T,** որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 10 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ^{3}օր/մարդ

n_1– սպասարկող աշխատոների թվաքանակն է՝ 120 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է ՝0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1140 օր

$W_{խ.տ.}$= (10 x 0.016 + 120 x 0.025) x 1140 = 3602.4 խմ/շին. ժամ.:

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$Մ_1$ = S_1 x K_1 x T, որտեղ՝

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 1000 քմ,

K_1 – 1 $մ^2$ օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 1140

$Մ_1$ = 1000 x 0.0015 x 1140 = 1710 խմ/շին. ժամ.:

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 5312.4 խմ/շին. ժամ:

Բազմաբնակարան բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել հարևանությամբ անցնող d=500մմ ջրատարից, կոյուղու միացումը՝ հարևանությամբ անցնող d=400մմ կոյուղատարին:

Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Ակունք համայնքի ոռոգման ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը 2025 Կվա հզորությամբ կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամաբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հետազոտվող տարածքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր Գյուղ գյուղի վարչական տարածքում: Այն իրենից ներկայացնում է մասնակի կառուցապատված տարածք: Տարածքում առկա են 225.1 քմ մակերեսով ինքնակամ շինություններ, որոնք ենթակա են քանդման :

Գեոմորֆոլոգիական պայմանները

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Կոտայքի սարահարթի սահմաններում, իրենից ներկայացնում է հարթ տարածք:

Հիդրոերկրաբանական պայմանները

Ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Տեղամասում մինչև 6,0 մետր խորություններում ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ 20-25,0 մետրից խորը արխիվային նյութերի դրանք գտնվում են հորիզոններում: Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարության համար:

Ֆիզիկաերկրաբանական պրոցեսներ և երևույթներ

Վտանգավոր երկրաբանական պրոցեսները և երևույթները, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ նախագծվող կառույցի նորմալ կենսագործնեության վրա բացակայում են:

2.1 ԿԼԻՄԱ

Տարածքը հիմնականում ունի չոր ցամաքային կլիմա, որտեղ ամռանը տաք է, իսկ ձմռանը բավականաչափ ցուրտ: Ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Աբովյան քաղաքի հարևանությամբ, ուստի բերում ենք նրա համապատասխան կլիմայական ցուցանիշները: Կլիման ցամաքային է, բարձրադիր մասերում՝ ձյունամերձ: Հունվարի միջին ջերմաստիճանը -4 °C-ից մինչև -14 °C է, հուլիսինը՝ 6-24 °C, տարեկան տեղումները՝ 400-970 մմ:

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 92 սանտիմետր:

Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 19մ/վ է, 50 տարվա ընթացքում 22մ/վ:

Օդի միջին ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 2.1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-5.1	-3.2	2.4	9.3	14.3	18.6	22.7	22.7	18.5	11.7	4.8	-1.9	9.6

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Եղվարդ մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Աղյուսակ 2.2.

Միջինը ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
73	69	63	60	60	54	50	48	49	59	70	74	61

Տեղումների բնութագիրը ըստ Եղվարդ օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում:

Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 2.3.

Տեղումների քանակը միջին , մմ մաքսիմալ օրական												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
34	36	43	58	64	39	23	13	16	39	36	35	**436**
30	28	42	40	42	29	53	45	35	39	37	28	**53**

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Եղվարդ մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

Քամու բնութագիրը

Աղյուսակ 2.4.

ամիս	քամու կրկնվողությունն ըստ ուղղությունների և անդորրի, % / քամու միջին արագությունը, մ/վրկ								
	Հս	ՀսԱրլ	Արլ	ՀվԱրլ	Հվ	ՀվԱրմ	Արմ	ՀսԱրմ	Անդորր
I	6	48	11	3	15	6	9	2	78
	1,7	1,8	1,7	1,5	1,7	1,9	1,8	1,7	
IV	5	48	7	3	17	10	8	2	50
	3,0	3,8	2,7	2,4	2,4	2,8	2,7	2,1	
VII	6	73	4	1	7	4	4	1	40
	4,9	5,5	4,9	1,7	3,0	2,5	3,0	1,8	
X	5	55	6	3	16	8	6	1	70
	2,7	3,1	2,1	1,9	1,9	2,3	1,8	2,2	

2.2 ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ

Ակունք համայնքի օդային ավազանի աղտոտվածությունը ձևավորվում է ավտոտրանսպորտային միջոցների, բնակչության կենսագործունեության և սակավաթիվ արդյունաբերական ձեռնարկությունների ազդեցության արդյունքում:

Մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը հանրապետության տարածքում վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՀՄԿ ՊՈԱԿ) կողմից: Սակայն, Ակունք համայնքում չկան ՀՄԿ ՊՈԱԿ դիտակետեր և բնակավայրի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները որոշվում են հաշվարկային եղանակով՝ ըստ բնակչության թվաքանակի:

Համաձայն ՀՄԿ ՊՈԱԿ -ի հաշվարկային տվյալների, Ակունք համայնքի օդային ավազանում աղտոտող նյութերի ֆոնային աղտոտվածությունը (1876 բնակիչ) կազմել է՝

- ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ^3,
- ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ^3,
- ծծմբային անհիդրիդ՝ 0.02 մգ/մ^3,
- անօրգանական փոշի՝ 0.2 մգ/մ^3:

2.3 ՀՈՂԵՐ

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Հիմնային աշխատանքներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքիերի տեղադրման համար կատարվելու է մոտ 135000 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր հանվող 32000 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի համայնքի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

2.4 ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 29.64 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 650 խմ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/(այդ թվում տարածքում առկա 225.1 քմ մակերեսով ինքնակամ շինության քանդումից առաջացող), ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից շինթույլտվությամբ հատկացված վայր:

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 27000 խմ ծավալով, կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:

2.5 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

Ակունք համայնքի և դրա մերձավոր տարածքների կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Ակունք համայնքը գտնվում է Գեղամա բուսաբանաաշխարհագրական ֆլորիստական շրջանում:

Բուսական աշխարհը սերտ կապված է բնակլիմայական, մորֆոլոգիական, աշխարհագրական և այլ պայմանների հետ, որոնք հստակեցնում են և կանոնավոր կերպով տարանջատում տարբեր տիպի ֆլորաների սահմանները: Համաձայն Ս. Դալի կենդանական աշխարհի տարածման սահմանները ավելի անորոշ են ու աղոտ, ավելի լայն և դժվար են սահմանազատվում շնորհիվ իրենց շարժունակության և ապրելաձևի առանձնահատկությունների (բնակալում, նստակյաց կամ չվող կենսակերպ, արտազոնալ բնակատեղերի առատություն):

Ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչների հիմնական մասը բնորոշ է միջին բարձրության լեռնային, տաք, չափավոր չորային կլիմայով տափաստանային լանդշաֆտային զոնային:

2.6 ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկա և հատիկա- տարազգի ներկայացուցիչները: Համաձայն նախկինում կատարված հետազոտությունների, այստեղ՝ անդեզիտա-բազալտային և տուֆա-լավային մայր ապարների վրա տարածված տարալվացված տիպիկ և սովորական սևահողերով տափաստանային տարածքներում կարելի է հանդիպել մոտ 150 բուսատեսակ: Դրանցից, որպես դոմինանտ կամ բնորոշ տեսակներ կարելի է նշել Իժալեզվազգիներից -OPHIOGLOSSUM YULCATUM (իժալեզու հասարակ), նոճազգիներից - JUNICPERUS EXCELSA (գիհի բազմապտուղի), հովանոցազգիներից - OPOPAHAX PERSICUM (ճավշիր պարսկական), ցախակեռասազգիներից - SAMBUCUS TIGRANII (թանթրվենի Տիգրանի), ազգաթոփազգիներից - EMPERTRUM HERMAPHRODITUM (ակնաթուփ երկսեռ) Festuca sulkata (շյուղախոտ), Artemisia austriaca Jack. (բարձրավենյակ), Koeleria nitidula Vel. (կելերիա), Thymus-ի տեսակներ (ուրց), Aegilops cylindrical Host. (այծակն), Scabiosa virgata Grossh. (քոսքսուկ), Achilea micranta M.B. (հազարատերևուկ) և այլն:

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, տնտեսական գործունեություն և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային զոնայի տեսակների ինչպես կազմը, այդպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը: Մասնագետների կարծիքով այսօր Հայաստանում պահպանության կարիք ունի ֆլորայի տեսակների մոտ 50 տոկոսը:

Ստորև, աղյուսակում բերված են Ակունք համայնքի մերձավոր տարածքներում պահպանության կարիք ունեցող բուսատեսակները: Հարկ է նշել, որ աղյուսակը կազմված է ՀՀ բուսականության Կարմիր Գրքի հիման վրա, որում գրանցված են պահպանության կարիք ունեցող ֆլորայի 387 տեսակ (տեսակների ընդհանուր թվի14 տոկոսը): Աղյուսակում բերված է նաև յուրաքանչյուր տեսակի պահպանության կարգավիճակը ըստ Կարմիր Գրքում կատարված դասակարգման (1- անհետացման վտանգի տակ գտնվող, 2 - հազվագյուտ):

Պահպանության կարիք ունեցող ֆլորայի տեսակները

աղյուսակ

Հ/հ	Բուսատեսակների անվանումը	Պահպանության կարգավիճակ	
	Լատիներեն	Հայերեն	
1	Centaurea Takhtajanii	Տերեփուկ Թախտաջյանի	1
2	Hieracium pannosum	Ճառակախոտ փրչոտ	1
3	Campanula Massalskyi	Զանգակ Մասալսկու	2
4	Cephalaria Tchihatchevii	Ջիվան Չիխաչովի	2
5	Astragalus Massalskyi	Գազ Մասալսկու	2
6	Aloea Sophial	Տուղտավարդ Սոֆիայի	1
7	Rheum Ribez L.	Խավրծիլ հազարջանման	1
8	Acantholimon avenaceum	Ոզնաթուփ վարսակային	2
9	Augeloass grassa	Այծակն հաստ	1
10	Scrophularia atropatana	Խլածաղիկ ատրոպատանյան	1
11	Erincium Wanaturii	Երջակ Վանատուրի	1
12	Sambucus Tigranii	Թանթրվենի Տիգրանի	2
13	Telephium olicispermum	Տելեփ սակավասերմ	2
14	Astragalus eriopidus	Գազ թավուտ	1

2.7 ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Նկարագրվող տարածքում տարածված են միջին բարձրության (մոտ 1600 մ ծովի մակերևույթից բարձր) լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Սակայն այստեղ հանդիպում են նաև արտազոնալ բնակավայրերին (կմախքային սարեր, քարաթափեր, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ: Համաձայն հրատարակված տվյալների, այս լանդշաֆտային զոնայում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ (որոնցից 82-ը՝ հանդիպում են նաև արտազոնալ բնակատեղերում), այդ թվում՝ 28 (20) կաթնասուն, 67 (41)՝ թռչուն, 15 (8)՝ սողուն և 3 (3)՝ երկկենցաղ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով: Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տվյալ տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված Crocidura (սպիտակատամիկ), Canis lupus (գայլ), Vulpes vulpes L. (աղվես), Cricetus auratus Nat. (գերմանամուկ), Mucrotus arvalis Pall. (դաշտամուկ), Perdix perdix L.(կաքավ), Grus grus L. (կռունկ) և այլն:

Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (բուսականության վերացում, ոռոգում, ավտոճանապարհների և այլ գծային կառուցվածքների կառուցում, օգտակար հանածոների արդյունահանում և վերամշակում, որսագողություն և այլն) կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել: Կենդանական աշխարհի պահպանության նպատակով դրանց զգալի մասը վերցված է հատուկ պահպանության տակ և գրանցված է Հայաստանի Հանրապետության, նախկին ԽՍՀՄ և Բնության Պահպանության Միջազգային Միության (ԲՊՄՄ) Կարմիր Գրքերում: Ստորև, աղյուսակում բերված են Կարմիր Գրքերում գրանցված կենդանիների տեսակները ըստ պահպանության կարգավիճակի (1- անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, 2-անհետացող, կրճատվող):

Անմիջապես կառուցապատման ենթակա տարածքում կարմիր գրքյան կենդանիներ և բույսեր չեն հայտնաբերվել:

Պահպանության կարիք ունեցող ֆաունայի տեսակները

աղյուսակ

hh	Կենդանիների անվանումը		Գրանցման Կարմիր գրքի անվանում		
	Լատիներեն	Հայերեն	ՀՀ	ԽՍՀՄ	ԲՊՄՄ
1	Vormela peregusna	Հարավռուսական խայտաքիս	2	2	-
2	Circaetus gollicus Gmelin	Եվրոպական օձակեր	1	1	-
3	Luscinia svecica occidentalis	Իրանական կապտափող	2	-	-
4	Lacerta oarva Boulenger	Փոքրասիական մողես	1	1	-

5	Rhinolophus Mehelyi	Մեհելիի պայտաքիթ	1	1	-
6	Barbastella leucomelas Gretzschmer	Ասիական լայնականջ չղջիկ	2	-	-
7	Capra aegagrus erxleben	Բեզոարյան այծ	2	2	-
8	Mabuya aurata Linneaus	Ոսկեգույն մաբուա	1	1	-
9	Elaphe hohenakeri strauch	Անդրկովկասյան սահնաօձ	1	1	-
10	Telescopus fallax iberus eichwaldi	Կովկասյան կատվաօձ	1	1	-

2.8 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տարածաշրջանի հիմնական ջրային զարկերակը Հրազդան գետն է:

Հրազդանը հանրապետության խոշորագույն ու կարևորագույն գետերից է՝ Արաքսի ձախ վտակն է: Ունի 141 կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650 կմ^2 է (առանց Սևանա լճի): Այն սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով և թափվում Արաքս գետը: Վերին հոսանքում մոտ 20 կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150 մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820 մ բարձրության վրա լցվում Արաքս: Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Խոշոր վտակներն են Մարմարիկը, Ծաղկաձորը, Դալարը, Արայի գետերը, Գետառը:

Սնումը հիմնականում ստորգետնյա (51%) և հալոցքային (37%) է, վարարումը՝ գարնանը, հորդացումները՝ ամռանն ու աշնանը:

Հրազդան գետի բազմամյա միջին տարեկան հոսքի բնութագրիչները բերված են ստորև Աղյուսակ 2.7-ում:

Աղյուսակ 2.7. Հրազդան գետի բազմամյա միջին տարեկան հոսքի բնութագրիչները

Գետը	Ծախսը, մ^3/վ	Տարեկան հոսքը, մլն.մ^3	Հոսքի մոդուլը, լ/վ կմ^2	Հոսքի շերտի բարձրությունը, մմ	Հոսքի գործակիցը
Հրազդան	22.6	714	9.78	308	0.57

Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրերի մոնիթորինգը իրականացվում է ՀՄԿ ՊՈԱԿ -ի կողմից: Համաձայն “Հիդրոօդերևութաբանության և մոնիթորնգի կենտրոն” ՊՈԱԿ 2021թ շրջակա միջավայրի մասին ամփոփ տեղեկագրի տվյալների Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով, մանգանով, նատրիումով և բորով: Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արզնի ՀԷԿ-ից ներքև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, մանգանով, վանադիումով, կալիումով, ընդհանուր և անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում

- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

3.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում:

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

3.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա:

Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

3.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկականն միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

3.3.4 Կանաչապատում

- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 16300 քմ:
- Տարածքում առկա մոտ 12 հատ մրգատու ծառերը կհատվեն:
- Համաձայն տարածքի նախնական կանաչապատման սխեմայի նախատեսվում է տնկել Կատալպա – 8 հատ, Կաղնի ամառային 16 հատ, Թխկի սրատերև - 72 հատ, Փռվող գիհի - 8 հատ, Սյունաձև թույա - 8 հատ, Ասպիրակ - 60 հատ, Բարբարիս - 48 հատ, Կիպրոս - 2700 հատ(540 գծմ), Թզուկ վարդեր - 4250 հատ,Սիզամարգ – 15500 քմ: Տնկման ենթակա ծառերի և թփերի վերջնական տեսակային կազմը և քանակները կհստակեցվի դենդրոնախագծի համաձայնեցումից հետո:
- Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը

սահմանված է շինարարության տրամադրումից հետո 38 ամիս, նշված հարցը կհստակեցվի մոտ 2 տարի հետո:

- Ոռոգման ներքին ցանցը նախատեսվում է կաթիլային:

Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ճանապարհին կից հատվածում, որը երկար տարիների ընթացքում արդեն իսկ ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների և որտեղ կենսաբազմազանությունը գրեթե բացակայում է :

Տարածքում հողի բերրի շերտը բացակայում է:

- Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի և ավելացած գրունտի տեղափոխման վայրերը:
- Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:

3.3.5 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրաձավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

3.3.6 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-արկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ

հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների
- իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.7 Աղմուկ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:

- պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,

- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

4. Մշտադիտարկումների իրականացման պլան

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է 2575000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	400000	400000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	38x35000	1330000
հողերի աղտոտվածության մշտադիտարկում	13x15000	195000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	13x25000	325000

Կենսաբազմազանության մոնիթորինգ	13*25000	325000
Ամբողջ շինարարության համար		2575000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (b) Շինարարակամ աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն (d) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվագ օգտագործել

Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով, (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուդարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ	Ինչպես	Ժամանակամիջոց	Կատարող

		իրականացնել	**իրականացնել**	**ց**	
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

Կենսաբազմազանություն	Բուսատեսակների, դրանց աճելավայրերի և պոպուլյացիաների վիճակի փոփոխության մշտադիտարկում	Գործունեության ենթակա տարածք	Արտաքին զննում, դաշտային հետազոտություններ	Շինարարության փուլում	Կապալառու
Ներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Ներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, EMEP/EEA, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохранных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ